



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

06.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/05

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.05.2017թ. թիվ 03/73-3/7672-17 գրությունով Վահրամ Հակոբյան Ա/Զ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.04.2017թ. թիվ 1/18-1/13063-17 գրության հիման վրա, 04.05.2017թ. թիվ 03/73-3/7672-17 գրությունով խորհրդում նախաձեռնել է Վահրամ Հակոբյան Ա/Զ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն 30.05.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(17/6)-15/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել:

Վերոհիշյալ գրությամբ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն հայտնել է նաև, որ հայտը ներկայացնելու օրը՝ 28.03.2017թ., չի ներկայացրել կեղծ տվյալ՝ իր կողմից ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ, քանի որ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելուց մեկ օր առաջ՝ 27.03.2017թ., «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղում կատարել է հարկային համապատասխան վճարումներ, մասնավորապես՝ եղել է շրջանառության հարկի և շրջանառության հարկի ակտի 10%-ի գծով պարտք և մարտի 27-ին (հայտը ներկայացնելուց մեկ օր առաջ) Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն վճարել է այդ գումարները:

Սակայն փոխանցումը կատարելու ժամանակ վերոնշյալ վճարման հանձնարարագրերում հայտնաբերվել է տեխնիկական խնդիր, որի պատճառով Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի կողմից կատարված վճարումները չի փոխանցվել համապատասխան հաշվեհամարներին և տվյալ խնդրի վերաբերյալ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն բանկից տեղեկացվել է հայտը ներկայացնելուց հետո:

Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն գտնում է, որ Ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել կեղծիք, քանի որ ենթադրել է, որ պարտականությունը նախօրոք կատարված է եղել և Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն այլևս պարտք չունի:

Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.05.2017թ. ժամը 17:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ եղել է շրջանառության հարկի և շրջանառության հարկի ակտի 10%-ի գծով պարտք և մարտի 27-ին (հայտը ներկայացնելուց մեկ օր առաջ) Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն վճարել է այդ գումարները:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 18.04.2017թ. թիվ 1/18-1/13063-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով՝ էլեկտրոնային (Armeps) համակարգի միջոցով, 2017թվականի մարտի 24-ին կազմակերպել է «ՀՀ ԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊԶԲ-(17/6)-15/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 5 մասնակիցներ: Հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբոլեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Ստացված եզրակացության համաձայն՝ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որի համաձայն՝ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.05.2017թ. ժամը 17:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/05 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/05 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(17/6)-15/11» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն **28.03.2017թ.** հայտ է ներկայացրել:

2. Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտներին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 07.04.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.04.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն **28.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 342 057 ՀՀ դրամի չափով:**

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է:

5. Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն 30.05.2017թ. Խորհրդին ներկայացրել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի 27.03.2017թ. թիվ 5997 և թիվ 6060 վճարման հանձնարարականները, որոնց համաձայն՝ 27.03.2017թ. Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի կողմից համապատասխան հարկատեսակների գծով կատարվել են համապատասխանաբար՝ 470 000 ՀՀ դրամ և 44 500 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 514 500 ՀՀ դրամ) գումարի վճարումներ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ռաումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.04.2017թ. թիվ 1/18-1/13063-17 գրությունը՝ կից փաստաթղթերով և Վահրամ Հակոբյան Ա/2-ի 30.05.2017թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ

կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(17/6)-15/11» ծածկագրով ընթացակարգի **28.03.2017թ.** հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.04.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն **28.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 342 057 ՀՀ դրամի չափով:**

Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն 30.05.2017թ. Խորհրդին ներկայացրել է «Ինելկոբանկ» ՓԲԸ-ի 27.03.2017թ. թիվ 5997 և թիվ 6060 վճարման հանձնարարականները, որոնց համաձայն՝ 27.03.2017թ. Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի կողմից համապատասխան հարկատեսակների գծով կատարվել են համապատասխանաբար՝ **470 000 ՀՀ դրամ և 44 500 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 514 500 ՀՀ դրամ) գումարի վճարումներ:**

Միևնույն ժամանակ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն հայտնել է, որ վճարման հանձնարարականներում հայտնաբերված տեխնիկական խնդրի պատճառով վերը նշված գումարները՝ Ընթացակարգի հայտը ներկայացնելու օրվա՝ 28.03.2017թ. դրությամբ չի փոխանցվել համապատասխան հաշվեհամարներին, մինչդեռ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, հաշվի առնելով մեկ օր առաջ վճարում կատարելու հանգամանքը:

Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքներում Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(17/6)-15/11» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի կարող դիտարկվել որպես Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, քանի որ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն, համաձայն ներկայացված վճարման հանձնարարականների, 27.03.2017թ. կատարել է համապատասխան հարկատեսակների գծով վճարումներ, որոնք սակայն, նշված հանձնարարականներում առկա տեխնիկական խնդրի պատճառով չեն փոխանցվել համապատասխան հաշվեհամարներին: Միևնույն ժամանակ Խորհուրդը գտնում է, որ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն 27.03.2017թ. փաստացի կատարել է իր վրա դրված պարտականությունը՝ անկախ այն հանգամանքից, որ վճարումը չի փոխանցվել համապատասխան հաշվեհամարին, ուստի Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն օբյեկտիվորեն կարող էր ենթադրել, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ն թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի

«բ» ենթակետի խախտում և Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ին սույն հիմքով Ցուցական ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 04.05.2017թ. թիվ 03/73-3/7672-17 գրությամբ Վահրամ Հակոբյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 35087389) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄԱՆՐ ԱՆԱՆՅԱՆ